ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/34

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթ, ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 20.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

- վերացնել 2021թ.-ի ապրիլի 5-ի թիվ 4 արձանագրության 2.3-րդ, 4.1-րդ և 4.2-րդ կետորով կայացված որոշումները,
- անբավարար գնահատել «Էվոյան Արեն Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.04.2021թ.-ին:

21.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/34 համարի ծածկագիրը:

29.04.2021թ.-ին և 07.05.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2021թ.-ին:

2. «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն 20.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի փետրվարի 12-ին ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/, որին ի թիվս «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ մասնակցության հայտ են ներկայացրել Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ն, «ՍԼԱՅՔ» ՍՊ և «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊ ընկերությունները: Մասնակցության հայտով Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ն և «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊ ընկերությունները հայտի ապահովում չեն ներկայացրել: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը /այսուհետ՝ հանձնաժողով/ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և ծանուցել վերոնշյալ մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխա-

նությունները: Վերոնշյալ մասնակիցները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել են հայտի ապահովումները, որոնք սակայն տրամադրված են 2021թ-ի ապրիլի 6-ին, այնինչ հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2021թ-ի մարտի 26-ը, հետևաբար վերջիններիս կողմից հայտերի կազմման և ներկայացման օրը վերը նշված ընկերությունները հայտի ապահովումներ չեն ունեցել:

Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել նաև այլ անհամապատասխանություններ: Չնայած վերոգրյալի՝ հանձնաժողովը ընտրված մասնակից է ճանաչել Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ին, ինչը Ընկերության կարծիքով իրավաչափ չէ և այդ որոշումը ենթակա է վերացման:

2.1. Նախ հարկ ենք համարում անդրադառնալ հայտի ապահովման էությանը, և այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ կետը տալիս է հայտի ապահովում հասկացության սահմանումը"

«9) հայտի ապահովում՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց.».

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է.

«Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

2. Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:»: Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևվում է, որ.

Հայտի ապահովումը կոչված է ապահովելու մասնակցի կողմից հայտով ստանձնված պարտավորությունների կատարումը և կանխելու հայտի ներկայացումից հետո հետագա մասնակցությունից հրաժարվելու հնարավորությունը: Եվ սա ինքնանպատակ չէ, նախկինում փորձը ցույց է տվել, որ ոչ բարեխիղճ մասնակիցները տարբեր

ընկերությունների անունից ներկայացնում էին մի քանի հայտեր տարբեր գներով և, եթե պարզվում էր, որ իրենց կողմից ներկայացված մի քանի գնային առաջարկների միջակայքում այլ գնային առաջարկ չկա, ապա նվազագույն գին ներկայացրած ընկերությունը հրաժարվում էր հետագա մասնակցությունից՝ թույլ տալով ավելի բարձր գնային առաջարկ ընկերությանը կնքելու պայմանագիր: Օրենսդրի կողմից հայտի ապահովման գործիքի ներդնումը պայմանավորված է նաև նման արատավոր երևույթների կանխման անհրաժեշտությամբ:

Հայտի ապահովումը ենթակա է ներկայացման հայտի հետ միաժամանակ, հակառակ պարագայում դրա ներկայացումը դառնում է անիմաստ:

Տվյալ պարագայում Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի և «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը ապահովում չեն ունեցել, քանի որ հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թ-ի մարտի 26-ին, իսկ Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի կողմից որպես հայտի ապահովում կանխիկ գումարը (անդորրագրի պատճենը կցվում է) մուտքագրվել է լիազորված մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) հաշվեհամարին միայն ապրիլի 6-ին, իսկ «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը (կցվում է) թողարկվել է 2021թ-ի ապրիլի 6-ին, ինչը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում է: Անտրամաբանական և ոչ իրավաչափ է ներկայացնել հայտի ապահովում ավելի ուշ ամսաթվով, քան ներկայացված է հայտը, քանի որ դրանով այլևս չի կարող ապահովվել մի իրավահարաբերություն՝ պարտավորություն, որը ծագել է ավելի վաղ:

Ստացվում է այնպես, որ Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ն և «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊԸ-ն մասնակիցները կարող էին հեշտությամբ հայտերի բացումից հետո հրաժարվել հետագա մասնակցությունից, առանց որևէ պատասխանատվության ենթարկվելու, քանի որ վերջիններիս հայտերը որևէ կերպ ապահովում չեն ունեցել հայտերի ներկայացման և բացման պահին ու փաստացի պատվիրատուն հնարավորություն չուներ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետի կիրառումը, այն է՝ վճարել հայտի ապահովում գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու դեպքում: Փաստորեն տվյալ պարագայում վերը նշված ընկերությունները հայտնվել են առավել շահեկան պայմաններում, ի տարբերություն մեր ընկերության, որը պատշաճ կարգով և ժամկետում ներկայացրել է հայտի ապահովում: Սա հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետով ամրագրված սկզբունքին, որը սահմանում է, որ գնման գործընթացը պետք է հիմնվի գնման գործընթացի

միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման վրա: Մինչդեռ հայտի ապահովման բացակայության պարագայում հանձնաժողովի կողմից հայտի բավարար գնահատումը խտրական է և չի ապահովում միասնական մոտեցում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի «ե» պարբերությունը սահմանում է.

«Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,», իսկ նույն կարգի 42-րդ կետը սահմանում է.

«42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:»: Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ նույնիսկ, եթե մասնակիցը հայտով չի ներկայացրել բանկային երաշխիքի պատճենը, ապա նա միևնույնն է պարտավոր է հայտերի բացման հաջորդող օրը ներկայացնի բանկային երաշխիքի բնօրինակը, հակառակ դեպքում հայտը ենթակա է մերժման, հետևաբար օրենսդրությունը չի ենթադրում, որ բանկային երաշխիքը կարող է թողարկվել հայտերի բացման օրվանից հետո ընկած ժամանակատվածում: Այո օրենսդրությունը հնարավորություն է տալիս հանձնաժողովին պահանջել շտկում նույնիսկ այն դեպքում, երբ հայտի ապահովումը չի ներկայացվել հայտի հետ միաժամանակ, սակայն դա կիրառելի է, երբ հայտի ապահովումը վճարված կամ բանկային երաշխիքի տեսքով թողարկված է հայտի ներկայացման պահին, սակայն ինչ-ինչ պատճառով հայտով չի ներկայացվել: Տվյալ դեպքը տարբերվում է բողոքարկվող դեպքից նրանով, որ հայտի ապահովումը առկա է, այն վճարված կամ թողարկված է, սակայն կցված չէ, ուստի, ընթացակարգին հետագա մասնակցությունից մասնակցի հրաժարվելու դեպքում նա ևս կվճարի ապահովումը:

2.2. Անհամապատասխանություններ են առկա նաև Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի հայտում, մասնավորապես հավելված 1-ում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարությունում և գնային առաջարկում նշված է, որ հայտատուն Արեն Էվոյան Մեսրոպի Ա/Ձ-ն է, այնինչ նման անվանմամբ ԱՁ գոյություն չունի, կից ներկայացված լիազորագրում և որպես հայտի ապահովում ներկայացված կանխիկ գումարի վճարման անդորրագրում նշված է էվոյան Արեն Մեսրոպի Ա/Ձ-ն, որն իրականում, այո գոյություն ունի, հետևաբար մասնակցի կողմից ներկայացված դիմումը և գնային առաջարկը ներկայացվել է մի Ա/Ձ-ի անունով, որը գոյություն չունի: Մասնակցի կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջը, որը սահմանում է, որ Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, մասնավորապես էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ մասնակից կողմից ներկայացված լիազորագրի պատճենը: Ուստի, նման պայմաններում ևս հայտը չէր կարող գնահատվել բավարար:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

- վերացնել 2021թ.-ի ապրիլի 5-ի թիվ 4 արձանագրության 2.3-րդ, 4.1-րդ և 4.2-րդ կետորով կայացված որոշումները,

անբավարար գնահատել «Էվոյան Արեն Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն 28.04.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում գտնվող թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/34 բողոքի շրջանակներում 27.04.2021թ-ին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ներկայացված պնդումների վերաբերյալ ներկայացնում ենք մեր դիրքորոշումը:

1. Պատվիրատուն վկայակոչելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, գտնում է, որ այն դեպքում, երբ մասնակիցները հայտով չեն ներկայացրել հայտի ապահովումները, սակայն այնուհետև շտկել են այդ անհամապատասխանությունը՝

ներկայացնելով հայտի ապահովումներ, անկախ դրանց թողարկման ժամկետից, ապա հայտերը ենթակա չեն մերժման:

1) Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):».

2) ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետը սահմանում է.

«32. Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքերում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին, իսկ գնային առաջարկը գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքից, որը հրապարակվում է հրավերով, պակաս լինելու դեպքում՝ նախահաշվային արժեքին: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով: Սույն պարբերությամբ նախատեսված կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումը պահվում է լիազորված մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում,

դ. գնային առաջարկ,

ե. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի,

փայերի) ավելի, քան տասը տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում.

3) ժ. խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը.».

3) «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ հրավեր) 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է.

«..Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2.4 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը

լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:. . .»:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտի ապահովումը հանդիսանում է հայտի անբաժանելի մասը և այն պետք է ներկայացվի հայտի հետ որպես մեկ փաթեթ: Մինչդեռ բողոքով նկարագրված դեպքում Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի և «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊԸ-ի կողմից հայտերի ապահովումները թողարկվել են հայտերի ներկայացման օրվանից մի քանի օր անց և հետևաբար չեն կարող կազմել հայտերի մաս, որոնք կազմվել կամ ներկայացվել են մի քանի օր առաջ: Այո, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը ընձեռում է հնարավորություն շտկելու հայտում առկա անհամապատասխանությունները, բայց այս դեպքում կարևոր է անդրադառնալ «շտկել» բառի էությանը: Շտկել, նշանակում է ուղղել, կատարած սխալը՝ անճշտությունը ուղիղ դարձնել, մինչդեռ հնարավոր չէ շտկել մի փաստաթուղթ, որն առհասարակ գոյություն չի ունեցել: Տվյալ պարագայում հայտերը ապահովումներ չեն ունեցել և դա ավարտված փաստ է, դա տեխնիկական վրիպակ կամ բացթողում չէ, որը հնարավոր է շտկել:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 388-րդ հոդվածի երաշխիքն ուժի մեջ է մտնում այն տալու օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով, հետևաբար՝ Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի և «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի ապահովումները ուժի մեջ են մտել դրանց թողարկման օրվանից՝ 26.04.2021թ-ից, ուստի, դրանց գործողությունը չի կարող տարածվել 2021թ-ի մարտի 26-ին ծագած իրավահարաբերությունների վրա:

Բացի այդ, մենք գտնում ենք, որ պատվիրատուները հայտերը գնահատելիս պետք է առաջնորդվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքներով, որոնք են՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: Չէ որ, Պատվիրատուն ինքն է փաստում, որ հայտի հետ միաժամանակ հայտի ապահովում չներկայացնել ինքնին անիմաստ է դարձնում հետագայում դրա ներկայացումը:

2. Հատկանշական է, որ Պատվիրատուն իր դիրքորոշմամբ չի անդրադարձել Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի հայտում առկա և մեր կողմից ներկայացված բողոքում նշված այլ անհամապատասխանություններին, ի թիվս որոնց, ցանկանում ենք ավելացնել, որ Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի հայտով ներկայացված լիազորագրով Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ն Հերմինե Ռուբենի Անդրեասյանին լիազորել է իր անունից էլեկտրոնային կնիքով հաստատել հրավերով բաց մրցույթի փաստաթղթերը, սակայն Հերմինե Ռուբենի Անդրեասյանին որևէ կերպ լիազորված չէ Արեն Էվոյան Մեսրոպի Մեսրոպի Ա/Ձ-ի անունից ստորագրելու հրավերի շրջանակներում ներկայացվելիք հայտը: Հետևաբար տվյալ մասնակցի կողմից չի պահպանվել հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետի պահանջը, որը սահմանում է.

«2.6 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:»:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք նշել, որ Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշմամբ ներկայացված պնդումները հիմնազուրկ են:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 21.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6075-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել է 29.04.2021թ.-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 27.04.2021թ.-ին ներկայացված թիվ ՊՆ/02/2237-2021 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ կողմից 20.04.2021թ. ԳԲՔԱ-ԼՕ-2021/34 ծածկագրով բողոքի վերաբերյալ գրության՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 12.02.2021թ. հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով՝ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայությունների գնման ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտեր են ներկայացրել նաև «ՏԵԽՍԹՈՐ» ՍՊԸ և Ա/Ձ Արեն Էվոյան Մեսրոպիը: 05.04.2021թ. հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ վերոնշյալ մասնակիցների ներկայացրած հայտերում բացակայում են վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսված հայտերի ապահովումները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և ծանուցել վերոնշյալ մասնակիցներին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները և 12.04.2021թ.՝ հայտերի գնահատման նիստի ավարտի օրը Ա/Ձ Արեն Էվոյան Մեսրոպիը գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսինքն՝ եթե տվյալ մասնակիցները հայտերով չեն ներկայացրել սույն ընթացակարգի հրավերով պահանջվող հայտի ապահովումները, սակայն շտկել են տվյալ անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հայտի ապահովումներ, անկախ դրանց թողարկման (փոխանցման) ժամկետից, ապա տվյալ մասնակիցների հայտերը մերժելու կամ անբավարար գնահատելու համար որևէ հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերվում է բողոքում նշված այն դիտարկմանը, որ հայտի ապահովումը հայտի հետ միաժամանակ չներկայացվելու պարագայում դրա ներկայացումը անիմաստ է դառնում, ապա հայտնում եմ, որ գործնականում նշված խնդիրն առկա է և չարաշահումների տեղիք կարող է տալ: Սակայն մյուս կողմից մասնակիցը հայտով կարող է ներկայացնել հայտի ապահովում կանխիկ փողի ձևով՝ գանձապետական հաշվին վճարելով շատ փոքր գումար (օր. 100 դրամ): Տվյալ պարագայում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի հիման վրա գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով պետք է կասեցնի հայտերի գնահատման նիստը և ծանուցի այդ մասնակցին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Եթե մասնակիցը չի շտկում անհամապատասխանությունը, ապա վերջինիցս գանձվելու է հայտի ապահովումը, որը տվյալ դեպքում կազմում է 100 դրամ:

Ամփոփելով վերագրյալը՝ հայտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, իսկ վերոհիշյալ խնդիրը կարող է լուծվել գնումների ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում փոփոխություն կատարելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից հայտնում եմ, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.02.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 26.03.2021թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն, «Տեխսթոր» ՍՊԸ-ն և «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերում բացակայում են հրավերով նախատեսված հայտի ապահովումները:

iv. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 05.04.2021թ.-ի ծանուցել է մասնակիցներին և առաջարկել է մինչև կասեցման ժամկետը ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով՝ վճարման հանձնարարագրով, իսկ «Տեխսթոր» ՍՊԸ-ն՝ բանկային երաշխիքի տեսքով: Մասնակիցները սահմանված ժամկետում նաև ներկայացրել են բանկային երաշխիքների բնօրինակները:

v. Նույն արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ 12.04.2021թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն, որին պայմանագիր կնքելու առաջարկ կներկայացվի անգործության ժամկետի ավարտից հետո:

vi. www.gnumner.am համացանցային կայքում 05.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

vii. «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն 06.04.2021թ.-ին Պատվիրատուին է ներկայացրել 06.04.2021թ.-ին տրված թիվ 010744 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագիրը (այսուհետ նաև՝ Հանձնարարագիր)՝ 5 700 000 ՀՀ դրամի չափով՝ որպես «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտի ապահովում:

viii. «Տեխսթոր» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 06.04.2021թ.-ին տրամադրված թիվ 1967-02 բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք)՝ որպես հայտի ապահովում:

ix. «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, որպես մասնակցի հարկ վճարողի հաշվառման համար նշել է 66933595, իսկ իրական շահառուների մասին տեղեկություն դաշտում նշել է՝ Արեն Էվոյան Մեսրոպի (Անուն, Ազգանուն, Հայրանուն):

x. https://petekamutner.am/ կայքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 66933595 թվերով հարկ վճարողի հաշվառման համարի ներքո գրանցված է միայն մեկ կազմակերպություն՝ «Արեն Մեսրոպի» Ա/Ձ-ն, իսկ https://www.e-register.am/ կայքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 66933595 թվերով հարկ վճարողի հաշվառման համարի ներքո գրանցված է միայն մեկ կազմակերպություն՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.01.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար

մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:...:

Նույն կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝

բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 7.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների

հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Վերոնշյալ նորմերի լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է հրավերով սահմանված պահանջի դեպքում, այն է՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Որպես բացառություն Կարգով սահմանվել են դեպքեր, երբ հայտի ապահովում չի ներկայացվում, դրանք են այն դեպքերը, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ինչպես նաև՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, երբ գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը (10 մլն. ՀՀ դրամը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերում բացակայում են հրավերով նախատեսված հայտի ապահովումները, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և 05.04.2021թ.-ի ծանուցել մասնակիցներին ու առաջարկել մինչև կասեցման ժամկետը ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապա-տասխանությունները, մասնավորապես՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով՝ վճարման հանձնարարագրով, իսկ «Տեխսթոր» ՍՊԸ-ն՝ բանկային երաշխիքի տեսքով: Մասնակիցները սահմանված

ժամկետում նաև ներկայացրել են բանկային երաշխիքների բնօրինակները: 12.04.2021թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն, ինչով պայմանավորած www.gnumner.am համացանցային կայքում 05.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

Որպես «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտի ապահովում, «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն 06.04.2021թ.-ին Պատվիրատուին է ներկայացրել 06.04.2021թ.-ին տրված թիվ 010744 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագիրը (այսուհետ նաև՝ Հանձնարարագիր)՝ 5 700 000 ՀՀ դրամի չափով, իսկ «Տեխսթոր» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 06.04.2021թ.-ին տրված թիվ 1967-02 բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք)՝ 5 700 000 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ որ Հանձնաժողովը, 05.04.2021թ.-ին կիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը, գործել է իրավաչափ, քանի որ հիշյալ դրույթների իմաստով հայտերը բացվում և գնահատվում են նիստի ընթացքում, որոշակի ժամանակահատվածում, որի շրջանակներում մասնակիցների կողմից կարող են ներկայացվել անհրաժեշտ կամ հավելյալ փաստաթղթեր: Հատկապես այն դեպքում, երբ Օրենքով, Կարգով և Հրավերով վերը նշված գործողությունների իրականացնելու սահմանապակում նախատեսված չէ:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումները Պատվիրատուի կողմից շտկման ժամանակահատվածում (06.04.2021թ.-ին) ներկայացնելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ «Էվոյան Արեն Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերն անբավարար գնահատելու մասին ներկայացված պահանջի բավարարմանը, քանի որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն՝ հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի՝ գնային առաջարկի համար, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի Բողոքներ քննող արձանագրում է, որ տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից կիրառելի է Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պահանջները:

Անդրադառնալով Ընկերության կողմից թիվ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ի հայտում առկա անհամապատասխանությանը, մասնավորապես՝ վերջինիս կողմից մասնակցի անվանման մեջ Հայրանունը չնշելու վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը: ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության լույսի ներքո, վերջինիս սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու հայտում հարկ վճարողի հաշվառման համարը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Արեն Էվոյան Մեսրոպի» Ա/Ձ-ն և «Արեն Էվոյան» Ա/Ձ-ն նույն իրավաբանական անձն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, հարկ վճարողի

հաշվառման համարը հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-20/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Էվոյան Արեն Մեսրոպի» Ա/Ձ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի հայտը մրցույթի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու մասին որոշում, գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ դրույթներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/34 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**